Համատեղ քննարկում Սահմանադրական դատարանում

19.10.2012 10:08

Սկզբնաղբյուրը՝ www.concourt.am

«Հոկտեմբերի 18-ին ՀՀ սահմանադրական դատարանում, ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ, կազմակերպվեց «Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործընթացը Հայաստանում» հետազոտության բաց քննարկում: ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ այն հրապարակել է ՀՀ փաստաբանների պալատը (հեղինակներ՝ Հ. Ալումյան, Կ. Մեժլումյան, Տ. Հայրապետյան, Ա. Գրիգորյան)։

Հետազոտությունն ընդգրկում է 1997 թվականից մինչեւ 2011 թվականի հուլիսի 15-ն ընկած ժամանակաշրջանում ՀՀ ՍԴ-ի մի շարք որոշումների կատարման ընթացքի դիտարկում: Հիմնականում վերլուծված է այն որոշումների կատարման ընթացքը, որոնցով այս կամ այն օրենքի դրույթ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր։

Քննարկումը բացեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, ով արժեւորեց վերոնշյալ ուսումնասիրության հրապարակումը, կարեւորեց ՀՀ փաստաբանների պալատի փորձագիտական կենտրոնի կատարած աշխատանքն ու ՀՀ սահմանադրական դատարանի հետ նրա արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաեւ իր նկատառումներն արտահայտեց հետազոտության որոշ եզրահանգումների վերաբերյալ։

Բաց քննարկմանը մասնակից ՍԴ անդամներն ու փաստաբաններն իրենց վերաբերմունքն արտահայտեցին վերոնշյալ հետազոտությանը, որը, անկասկած, օգտակար է լինելու նաեւ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, դատարանների, փաստաբանների, իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ու անհատների համար։»

Բեռնել «Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործընթացը Հայաստանում» հետազոտությունը այստեղ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })